պատմական շրջանների կերտուածներով իրար նման եւ իրար հետ կապ ունին։ Այս Պալխարի եւ Բահլ-Բահլխիբարի մէջ պէտք է որոնել պահլաւներին, ոչ թէ Բակտրիայում։ Այս պարարան աւելի կը պարզուի Ճորոխի վտակների ափերին գտնուած աւանների, գեղերի, առուակների, լեռների, ամրոցների եւ աւերակների ուսումնասիրութիւնը կատարելով։ Միայն Պալխար եւ Փեսունջուր վտակները չեն, այլ շատ ուրիշ փաստեր կան, որ լրացնում են պահլաւների կալուածքի մանրամասնութիւնները, տեղն ու դիրքը։

Լիվանայի ձորում Ճորոխն աջ ափից ընդունում է Կոլլիկ, Ավարես, Ախալդա, Սիմինիկոտ, Բաշկարիտ, Ամատան, Ջիլգաս, Ինխան, Նակաչ, Իթիկ, Սիջիկ, Արկինս, Միսուր, Մորվետ, Տուրմուտալէտ, Էրիխան, Բավիէ, Բեծ, Խորան, Բարակետ, Թոխնա-Գորա, Կանդա-Գորա, Ոէդար, Խերս (Քերս), Պիտոկ, Ալվանի կալա, Խիտուց փոր, Կաօլա-Գորա, Նուտա-Գորա, Նոմատերիա, Աւազան, փոքր Խոդ, մեծ Խոդ, Գիդրելիտի, Բակտա, Ջահրա-խան, Օրջոխ (Որջնհաղ) առուները, որոնք ոռոգում են համանուն գեղերը, նրանց հանդերը, այգեստանները, եայլաներն ու ախոռները։ Իսկ ձախ ափից Փեսունջուրից յետոյ ընդունում է Բինատ առուակը համանուն գեղից եւ Մեյօ վտակը, որ իջնում է Դիդուրէ եւ